



ՆԱԽԱՐԱՐ ԶՕՐ. ՓԱՆՈՍ ՄԱՆՃԵԱՆ ԻՐ ՀԱՐԱՉԱՍ ԴՊՐՈՑԻՆ ՄԵՉ

Ընդառաջելով Տևորենության հրաւերին, Յ.Ա.Գ.-ի 1971ի շրջանաւարտ, Լիբանանի կառավարութեան մէջ պետական նախարար, լիբանանեան բանակի հանգստեան կոչուած Չօրավար Փանոս Մանճեան հիւրը եղաւ դպրոցի 2 Դեկտեմբերի, 2011-ի ատենամարզանքին, Հայ Աւետ. Ա. Եկեղեցիին մէջ: Ներկայ էր նաեւ Հոգաբարձութեան Ատենապետուհի Տիկ. Ռ. Արթինեան:



Լիբանանեան քայլերգի յոտնկայս ունկնդրութենէն ետք, դպրոցի տնօրէն Դոկտ. Չաւէն Մաքրլեան ներկայացուց իր երբեմնի աշակերտին, օրուան հիւր՝ պետական նախարար Զօր. Փանոս Մանճեանի կենսագրական գիծերը եւ յիշեց ւարտական տարիի իր նշանաբանը, առնուած Սիամանթոյի խօսքերէն՝ «Կանգ մի առներ երիվար, նպատակս դժուարութիւն չի ճանչնար»: Ահաւասիկ ան՝ դժուարութիւններ յարթահարելով բարձունքներ նուաճած է: Այա բէմ հրաւիրեց յարգելի հիւրը:

Նախարար Զօր. Փանոս Մանճեան նախ շնորհակալութեան խօսք ուղղեց դպրոցին եւ իր տնօրէնին, նաեւ իր սրտի խօսքը ըսաւ աշակերտութեան: Այա՛ ան հանգամանքներով պատասխանեց հանդիսավար Դոկտ. Արմէն Էլ-Նէշլեանի ուղղած հարցումներուն, որոնք կը վերաբերէին զինուորական կրթական եւ քաղաքական եւ կեանքի փորձառութիւններու տարբերութեանց, պետական սպասարկութիւններու մէջ հայերու աշխատանքի կարելիութեան, Հայաստան-Լիբանան յարաբերութիւններուն եւ հայ դպրոցի կարելիութեան: Յարգելի նախարարը նշեց թէ ինք հպարտ էր Յ.Ա.Գ.-էն շրջանաւարտ ըլլալուն, եւ փաստ էր՝ որ հայ դպրոցի ճամբով կարելի է պետական բարձր պաշտօններու հասնիլ:

Ձեռնարկը աւարտեցաւ հանդիսավարին շնորհակալութեան խօսքով:

ՊՐՆ. ՏՆՕՐԵՆԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՇՐՋԱՆԱԲԱՐՏՆԵՐՈՒՆ ՀԵՏ

ԳՐԱՃԵԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ ԻՐԵՆՅ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՏԿԱՅՈՒՄԸ 5000 ՏՈՒՄԻ ԲԱՐՉՐԱՅՈՒՑԻՆ



Դպրոցի տնօրէն Դոկտ. Չաւէն Մաքրլեան ամառնային իր արձակուրդին, Ամերիկայի Միացեալ Նահանգներ իր եղբոր տուած այցելութենէն օգտուելով, զոյգ հանդիպումներ ունեցաւ դպրոցի շրջանաւարտներու եւ նախկին աշակերտներու հետ:

Ամսնցմէ առաջինը կայացաւ 20 Օգոստոսի, 2011-ին, Յ.Ա.Գ.-ի շրջանաւարտներ Թէքեան քոյրերու տան մէջ, Փարամըս (Նիւ Ճըրզի): Հանդիպումին ներկայ էին աւելի քան 20 շրջանաւարտ-շրջանաւարտուհիներ, ոմանք իրենց կողակիցներով, ինչպէս նաեւ նախկին ուսուցչուհի Տիկ. Մարիա Ակիլեանը եւ ամուսինը: Հաւաքոյթին սկիզբը խօսք առաւ Յ.Ա.Գ.-ի շրջանաւարտ, բանաստեղծուհի Վեհանոյշ Թէքեան, ապա կարճ ելոյթ մը ունեցաւ Պրն. Տնօրէնը:

Հաւաքոյթներէն երկրորդը կայացաւ 24 Օգոստոսին, կազմակերպուած ԱՄՆ-ի Արեւմտեան Ափի Հայ Աւետ. Գոլէճի Շրջ. Միութեան Վարչութեան կողմէ, ի պատիւ Պրն. Տնօրէնին, Կլեյնտէյլի «Փենիսիա» հայկական ճաշարանին մէջ, 150 շրջանաւարտներու, նախկին աշակերտներու եւ ուսուցիչներու եւ իրենց պարագաներու ներկայութեան: Ճաշկերոյ-

թին աղօթք մատուցանեց եւ օրուան պատշաճ հոգեւոր երգ առաջնորդեց Վեր. Պարգեւ Տարագճեան, բացման հակիրճ խօսք մը ըրաւ Շրջանաւարտիցի վարչութեան անունով Թովմաս Տօքմէճեան, եւ ապա՝ ելոյթ ունեցաւ Պրն. Տնօրէնը:

Ընթրիքին ներկայ էին նախկին ուսուցիչներէն Պատ. եւ Տիկ. Յովհաննէս եւ Ժաննէթ Մելքոնեան, Տիկ. Ժաննէթ Զատունի, Տիկ. Սօսի Նաճարեան-Տարթի, Պրն. Կարօ Գազանճեան եւ Պրն. Ծորճ Թէօշկերեան, ինչպէս նաեւ դպրոցի բարերարներէն Տիար Րաֆֆի Մանուկեան եւ Պրն. Տնօրէնին ՀԱԳ-էն շրջանաւարտ դասընկեր-դասընկերուհիներէն խումբ մը:



Տեղույն վրայ նուիրատուութիւններ կատարուեցան: Պրն. Տնօրէնը Պէյրութ վերադարձաւ, հետը, դպրոցին բերելով 15,284 տոլար (տեսնել նուիրատուութեանց բաժինը):

Պրն. Տնօրէնը ընկերակցութեամբ Շրջ. Միութեան վարչականներէն Պրն. Թովմաս Տօքմէճեանի, 30 Օգոստոսին այցելեց Րաֆֆի եւ Վիզել Գրաճեան եղբայրներու գործատեղին, ուր անոնցմէ իւրաքանչիւրը որպէս տարեկան յատկացում 2500-ական տոլար նուիրեց դպրոցին:

ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ ԼԻԲԱՆԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆ ԱՅՅԵԼԵՑԻՆ

Լիբանանի անկախութեան տօնին առիթով, նախօրօք առնուած ժամադրութեամբ, Երկրորդական եւ Միջնակարգ բաժիններու աշակերտները, առաջնորդութեամբ դպրոցի տնօրէնին եւ իրենց դաստիարակներուն, Լիբանանի խորհրդարանը այցելեցին Ուրբաթ, 18 Նոյեմբերի, 2011-ին: Հոն զիրենք ընդունեց Լիբանանեան խորհրդարանի անձնակազմէն Գևորգ Պասսամ Ուլեյտայթ, որ խորհրդարանի մեծ ժողովարարին մէջ, երեսփոխաններու աթոռներուն վրայ բազմած աշակերտներուն խօսեցաւ լիբանանեան խորհրդարանին մասին, լայն բացատրութիւններ տալով: Այա՛ առիթ տուաւ կրթական մշակներուն եւ աշակերտներուն հարցումներուն, եւ բաւարարեց զանոնք իր պատասխաններով: Աշակերտները գոհ տրամադրութեամբ դպրոց վերադարձան Լիբանանի խորհրդարան իրենց այցէն ետք:

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ

♦Պատմութեան Ակումբը, առաջնորդութեամբ Պրն. Տևորէնին, սինեմա Գոնգորտի մէջ ներկայ եղաւ Ալեքսանտր Տիւմայի «Երեք Յրացանակիրները» ժապաւենին, 15 Յոկտեմբերի, 2011-ին:

♦Նախ. Դ-2. կարգերը 21 Յոկտեմբերի, 2011-ին այցելեցին Պէյրուֆի արուարձանին մէջ գտնուող կենդանաբանական պարտեզ մը, առաջնորդութեամբ Տիկ. Նուարդ Ղորղորեանի:

♦Նախ. Ա-2. դասարանները իրենց դաստիարակ ուսուցչուհիներու առաջնորդութեամբ, փոխան ատենամարզանքի, այցելեցին Սանայայի հանրային պարտեզը, 21 Յոկտեմբերի, 2011-ին:

♦Կենսոլորտի Ակումբը, առաջնորդութեամբ իր պատասխանատուին՝ Տիկ.



Նուարդ Ղորղորեանի, 29 Յոկտեմբերի, 2011-ին այցելեց Ժի'թայի քարայրը, հաճելի եւ օգտաշատ օր մը անցընելով:

♦Պատմութեան Ակումբը, առաջնորդութեամբ Պրն. Տևորէնին, 5 Նոյեմբերի, 2011-ին դպրոցին մէջ, Braveheart պատմական խորքով ֆիլմը դիտելէ ետք, Պլիս փողոցի Պըրկըր Բիսկին մէջ հաւաքական ճաշ ունեցաւ:

♦Ս. Գիրքի Ակումբը, առաջնորդութեամբ հովիւին, հոգեւոր տեսուչին եւ Տիկ.



Յռութ Եունիսեսի, օգտաշատ օր մը անցուց ԶԶԱԿ-ի մէջ, ընկերակցութեամբ եկեղեցւոյ Պատանեացին, 7 Նոյեմբերի, 2011-ին:

♦Նախակրթարան Ա-2-ի աշակերտները Կաթողիկոսարանի Յայ Գիրքերու ցուցահանդէս-վաճառքը այցելեցին 16

Նոյեմբերի, 2011-ին, առաջնորդութեամբ Նախակրթարանի ուսուցչակագմին: Իսկ Մանկապարտեզի աշակերտները՝ առաջնորդութեամբ Մանկապարտիզպանուհիին, 21 Նոյեմբերի, 2011-ին:

♦Մանկապարտեզի աշակերտութիւնը, առաջնորդութեամբ մանկապարտիզ-



պանուհի Օրդ. Յասմիկ Թորոսեանի, այցելեց Kiddy Monkey խաղավայրը, 17 Նոյեմբերի, 2011-ին:

♦Միջնակարգի 7-9-րդ դասարաններու աշակերտները, 5 Դեկտեմբերի, 2011-ին այցելեցին Պիելի արաբերէն գիրքերու ցուցահանդէս-վաճառքը, առաջնորդութեամբ Տիկ. Մարիա Ռահպանի: Իսկ Նախ. Ա-2-ի աշակերտութիւնը Նոյն վայրը այցելեց 12 Դեկտեմբերի, 2011-ին, առաջնորդութեամբ Տիկ. Նա'ամաթ Խաթիպի:

♦Պատմութեան Ակումբի անդամները, առաջնորդութեամբ Պրն. Տևորէնին, Պէյրուֆի Ամերիկեան Յամալսարանի պատմութեան թանգարանը այցելեցին 5 Դեկտեմբերի, 2011-ին:

♦Նախ. Ա-2. դասարանները իրենց ուսուցչուհիներուն առաջնորդութեամբ ներկայ եղան Տիկ. Լանա Ատրուսիի բեմադրած «Մանչուկը եւ Գարլսոնը» մանկապատանեկան հեքիաթերգութեան, Տէր Մելքոնեան թատերասրահին մէջ, 8 Դեկտեմբերի, 2011-ին:

ԾՆՈՂԱԿԱՆ ՄԱՐՄԻՆԻ ՆՈՐ ԿԱԶՄԸ

25 Նոյեմբերի, 2011, երեկոյեան ժամը 6.00-ին, կրթական նախարարութեան համաձայնութեամբ, դպրոցի Ծնողական Մարմինը ընտրուեցաւ 3 տարիներու համար:

Նորընտիր Ծնողական Մարմինի անդամներն են՝ Տիկիներ Մարալ Հայտօսթեան, Լիլա Արթինեան, Նիրվա Քեստէնեան, Թալին Գազանճեան, Մարլէն Քէօշկերեան, Վիքի Պապիկեան, Հայկուհի Յովհաննէսեան, Ռոզէթ Կոբարեան, Սալբի Գալուստեան, Էտիթա Քիւրքեան, Ծովակ Ուղուրեան, Սիլվա Քիրէճեան եւ Տիկ. Վերա Հատտատ:

ԼՈՒՐԵՐ ՈՒՍՈՒՑՉԱԿԱԶՄԵՆ

♦Յ.Ա.Գ.ի հայկական բաժանմունքի Ատենապետ Տիար Արմէն Իւրնէշլեան Երեւանի Պետական Յամալսարանի մէջ, 19 Յոկտեմբերի, 2011-ին, յաջողութեամբ պաշտպանեց բանասիրական գիտութիւններու թեկնածուի (մեր առումով դոկտոր) իր թեզը՝ «Նորագոյն Շրջանի Յայ Գրականութիւնը»:

♦Բնագիտութեան այցելու ուսուցիչ Պրն. Արա Տետեան անցած Յունիս 2011-ին, Պէյրուֆի Ամերիկեան Յամալսարանէն ստացաւ Մագիստրոս Գիտութեանց տիտղոսը Math.-ի մէջ, ուսման ընթացքը յաջողութեամբ աւարտելէ ետք:

♦Դպրոցի համակարգիչի դասատու Տիկ. Փոլին Աբանեան, իր ամուսնոյն հետ 19 Նոյեմբերի, 2011-ին բախտաւորուեցաւ դուստրով մը՝ Զարթին-Ռիթա:

♦Տիկ. Նայիրի Սակոյրեան-Նոիրա, 6 Դեկտեմբերի, 2011-ին, իր ամուսնոյն հետ բախտաւորուեցաւ առջինէն դուստրով մը՝ Կապրիէլա:

ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ Յ.Ա.Գ.-ԷՆ

♦30 Սեպտեմբերի, 2011-ին, Յ.Ա.Գ.-ը վերաբացաւ իր դռները, 131 աշակերտներով, որ 12 առ հարիւրի յաւելում մըն է նախորդ տարուան համեմատութեամբ:

♦Յ.Ա.Գ.-էն ներս հանդիսաւորապէս Նշուեցան Յայաստանի Գ. Յանրապետութեան անկախութեան 20-ամեակը ԺԲ. դասարանին կողմէ, եւ Թարգմանչաց Տօնը՝ ԺԱ. դասարանին կողմէ: Այս վերջին հանդիսութեան հիւր պատգամաբերն էր գրող Տիար Յամբիկ Մարտիրոսեան:

♦Անցնող ամրան, Յուլիս 2011-ին, ԺԱ. դասարանէն Բաֆֆի Քեստէնեան՝ քիմիագիտութեան, եւ Զաւէն Լէփէճեան՝ համակարգիչի դասընթացներու մասնակցեցան Լիբանանեան Ամերիկեան Յամալսարանին մէջ եւ արձանագրեցին բացառիկ յաջողութիւն (L.A.U.-ի բառերով՝ extraordinary achievement) եւ արժանացան պարգէւի:

♦ՅԱԳ-ի աշակերտութիւնը 527.000 լ.ն. նուիրեց «Յայաստան» Յիմնադրամի «Զուր պարգէւէ, կեանք պարգէւէ» նուիրահաւաքի թելեթոնի օրը:

ԼՈՒՐԵՐ ՇՐՋԱՆԱԻԱՐՏՆԵՐԷ

♦Ջայ Աւետ. Գոլէճի նախկին աշակերտ, Յ.Բ.Ը.Մ.-ի փոխ-նախագահ Տիար Սինան Սիւնեան, 25 Սեպտեմբերի, 2011-ին, Լոս Անճելոսի մէջ տեղի ունեցած պաշտօնական ճաշկերոյթի մը ընթացքին, Ջայաստանի Հանրապետութեան նախագահ Սերժ Սարգսեանի կողմէ պարգևատրուած է Անանիա Շիրակացի շքանշանով:



♦Յ.Ա.Գ.-ի երկարամեայ նախկին աշակերտ բարիգաբնակ Տիար Հրաչ Սիսեռեան, Յ.Մ.Ը.Մ.-ի 10րդ պատգամաւորական ժողովին, որ կայացած է Ծաղկաձորի (Հայաստան) մէջ 5-10 Սեպտեմբերի, 2011-ին, ընտրուած է Յ.Մ.Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչութեան անդամ, իբրև միակ ներկայացուցիչը Եւրոպայէն:

♦1968-ի շրջանաւարտ բանաստեղծ Դոկտ. Վահան Չանոյեան, Երեւանի մէջ լոյս ընծայած է իր բանաստեղծութիւններու նոր հատորը՝ «Եզրէն Դուրս»: Այս հեղինակին երկրորդ քերթողագիրքն է, որ կ'ամփոփէ իր խոհերը կեանքի, սիրոյ, եւ գոյութեան իմաստաւորման մասին: Դոկտ. Չանոյեան ներկայ եղաւ իր գիրքի շնորհահանդեսին, կազմակերպուած Համագգայինի եւ «Ազգակ»ի կողմէ 9 Նոյեմբերի, 2011-ին, Փիլնիկ սրահին մէջ:

♦Յ.Ա.Գ.-ի 1979-ի շրջանաւարտ եւ դպրոցի հոգաբարձութեան գանձապահ Տիար Ներսէ Պաղտոյեան, Հոկտեմբեր 2011-ին, Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակի Լիբանանի Կեդրոնական Մարմնի անդամ նշանակուած է, ներկայացնելով Հայ Աւետ. Համայնքը:




♦1972-ի շրջանաւարտ Տիար Յովսէփ Ինճեճիկեան տնօրէն նշանակուած է Լոս Անճելոսի Սահակ-Մետրոպ Հայ Զրիստոնէայ Վարժարանին, 2011-2012 տարեշրջանէն սկսեալ:

♦1973-1975-ի Յ.Ա.Գ.-ի նախկին ա-

շակերտուի Տիկ. Գոհար Պալիքեան-Չաիեր երեք տարիներէ ի վեր տնօրէնուիին է Օրէյնճ Զաւոնթի Անի Կիրակոս Սինասեան ամենօրեայ վարժարանին:

♦1961-ի շրջանաւարտուի Տիկ. Արփիլէ Գոնեալեան-Կրէնիէ անգլերէն բանաստեղծութիւններու իր նորագոյն գիրքը՝ Concession Stand լոյս ընծայած է Ամերիկայի մէջ:



♦1978-ի շրջանաւարտ Տիար Համբիկ Գեորգեան, Լոստոնի Յ.Բ.Ը.Մ.-ի տեղական մասնաժողովի վարչական անդամ ընտրուած է խորհրդատուի հանգամանքով:

♦Յ.Ա.Գ.-ի 1971-ի շրջանաւարտ դասարանը իր 40-ամեակի վերահաւաքը ունեցած է Լոս Անճելոսի մէջ, 22 Հոկտեմբերի, 2011-ի շաբաթավերջին: Ներկայ եղած են 25 շրջանաւարտներ,



«Ֆենիսիա» հայկական ճաշարանին, Սերգո Գասարճեանի եւ Յարութ Տեր Դաւիթեանի բնակարաններուն մէջ: Տիար Հայկ Կիւլեսերեան (Մեքսիքո) 200 տոլար նուիրած է դպրոցին, իսկ 100ական տոլար նուիրած են՝ Օրդ. Անահիտ Սարգիսեան, Տեր եւ Տիկ. Գեորգ եւ Անի Իսկէնտերեան, Դոկտ. Արա Թեքեան, Տեր եւ Տիկ. Րաֆֆի եւ Արսիլնէ Կեօվճէլեան, Տեր եւ Տիկ. Սեպուհ եւ Էտմա Գիգիրեան, Տեր եւ Տիկ. Ճորճ եւ Էլիզ Զարամ, Տեր եւ Տիկ. Էլի եւ Մարիա Էլմաճեան, Տիար Յակոբ Սապունճեան, Տեր եւ Տիկ. Յարութ եւ Ռոզիկ Տեր Դաւիթեան, Տեր եւ Տիկ. Յովհաննէս եւ Յասմիկ Օվանեսեան, Տեր եւ Տիկ. Հրաչ եւ Հելկա Սարգիս, Տիար Հրանդ Գոյումճեան, Տեր եւ Տիկ. Հրաչ եւ Լեւոն Գրիգորեան, Տեր եւ Տիկ. Լեւոն եւ Հուրի Կալեան, Տեր եւ Տիկ. Ասպետ եւ

Նայիրի Պալանեան, Տիար Նշան Թոփճեան, Տեր եւ Տիկ. Աւագ եւ Սալբի Աւագեան, Տեր եւ Տիկ. Սերժ եւ Անիթա Պչաքճեան, Տեր եւ Տիկ. Սերգո եւ Կրէյս Գասարճեան, Տեր եւ Տիկ. Սեդո եւ Սիլվա Եօրտէքեան (ի բացակայութեան), Օրդ. Սօսի Սինասեան, Տեր եւ Տիկ. Վահէ եւ Սենտի Պալուզեան, Տեր եւ Տիկ. Պերճ եւ Վարսենիկ Մասոյեան, Տեր եւ Տիկ. Վաչէ եւ Անի Պապիկեան եւ Տիար Վիգէն Կիւլեսերեան:

♦Յ.Ա.Գ.-ի նախկին երկարամեայ (1955-1961) աշակերտ Արա Գալֆայեան, սեփականատէրը Կլէնտէյլի «Ֆենիսիա» ճաշարանին, Հարաւային Գալիֆորնիոյ լաւագոյն ճաշարանատէրը հռչակուեցաւ 20 Մարտի, 2011-ին, Հարաւ. Գալիֆորնիոյ ճաշարաններու քննադատներու միութեան կողմէ:

♦Յ.Ա.Գ.-ի, 2007-ի շրջանաւարտներ Կարօ Զեօրքիւնեան եւ Սեւակ Զեստէնեան Հայկազեան Համալսարանէն Պսակաւոր Արուեստից տիտղոսով վկայուեցան 2 Յուլիսի, 2011-ին: Անոնցմէ Կարօ Զեօրքիւնեան, որ Տեչական Պատուոյ ցանկին վրայ էր, ամավերջի վկայականաց բաշխման հանդէսին արաբերէն ուղերձը կարդաց:

♦Յ.Ա.Գ.-ի, 2005-ի շրջանաւարտ Յակոբ Գեորգեան իբրև դեղագործ վկայուեցաւ Լիբանանեան Ամերիկեան Համալսարանէն, 30 Յունիսի, 2011-ին:

♦1969-ի շրջանաւարտուի Տիկ. Լիզա Տեր Սկրտիչեան-Սանթիկեան, Ամերիկայի Արեւմտեան Ափի Հայ Օգնութեան Միութեան 2011-2012-ի Շրջանային Գործադիր Մարմնի վարչական ընտրուած է իբր խորհրդական: Իսկ Աթէնքի մէջ, 2011-ի Հոկտեմբերին կայացած Յ.Օ.Մ.-ի 91-րդ Համաժողովին ԱՄՆ-ի Արեւմտեան Ափէն ընտրուած չորս պատգամաւորներէն մէկը եղած է 1980-ի շրջանաւարտուի Օրդ. Ռիթա Հինդլեան:

♦5 Նոյեմբերի, 2011-ին, Բարիզի մէջ Սփիւռքի նախարարուի Հրանոյշ Յակոբեանի եւ Հայաստանի Բարիզի դեսպանի հովանաւորութեամբ տեղի ունեցած է Հայ Ոսկեգործներու Միութեան տարեկան հաւաքը: Աշխարհի տարբեր երկիրներէն մասնակիցներու կողքին եղած է Հայ Ոսկեգործներու Միութեան Եւրոպայի մասնաճիւղի նախագահ Յ.Ա.Գ.-ի 1973-ի շրջանաւարտ Տիար Յովէլ Շնորհոբեան:

ԲԱՆՏԱՒՈՐՈՒԹԻՒՆ

•1988-ի շրջանաւարտ Տիար Կարո Աւետեան եւ տիկինը բախտաւորութեան մանչ զաւակով մը՝ Վահան, 23 Նոյեմբերի, 2011-ին, Պէյրուսի մէջ:

•Նախկին երկարամեայ աշակերտուհի (1987-1995) Վերա Մահտեսեան-Եթիմեան իր ամուսնոյն՝ Պրն. Առոյի հետ բախտաւորութեան երկուորեակ դուստրերով՝ Ռիթա եւ Գլարա, 3 Յոկտեմբերի, 2011-ին, Պէյրուս:

•2001-ի շրջանաւարտուհի Տիկ. Ռոզի Գեորգեան-Գազանճեան եւ իր ամուսինը՝ Պրն. Սեպուհ, բախտաւորութեան առջինն զուստրով մը՝ Լուի 20 Յոկտեմբերի, 2011-ին, Սոնրեալ:

ՄԿՐՏՈՒԹԻՒՆ

•Փոքրիկն Մարիուս Աճեմեանի (զաւակը 2001-ի շրջանաւարտ Մարիուս Աճեմեանի) մկրտութիւնը տեղի ունեցաւ 8 Յոկտեմբերի, 2011-ին, Այնճար, Յայ Աւետ. Եկեղեցիին մէջ:

ԽՕՍԿԱՊ

•2010-ի շրջանաւարտուհի Օրդ. Յուրի Լեփեճեան խօսք կապ ըրած է Տիար Ծեֆրի Գասարճեանի հետ, 27 Մայիսի, 2011, Պէյրուսի մէջ:

ՆՇԱՆՏՈՒՔ

•2007-ի շրջանաւարտուհի Օրդ. Մարիա Փայլազեան նշանուած է Տիար Րաֆֆի Բարսեղեանի հետ 26 Յունիսի, 2011-ին, Այնճարի մէջ:

•2005-ի շրջանաւարտ Տիար Շանթ Դանիէլեան նշանուած է Օրդ. Սեդրի Թերգեանի հետ, 7 Օգոստոսին, Երեւանի մէջ:

ՊՄԱԿ

•Երկարամեայ նախկին աշակերտ (1992-2000) Տիար Միքայէլ Վայեճեան պսակուած է Օրդ. Դալար Գույումճեանի հետ, 6 Օգոստոսի, 2011-ին, Յայ Աւետ. Ա. Եկեղեցիին մէջ:

•1997-ի շրջանաւարտուհի Օրդ. Յելեն Մանուֆար պսակուած է Տիար Վիգէն Ծերունեանի հետ, 8

Յոկտեմբերի, 2011, Սբ. Նշան Մայր Եկեղեցիին մէջ:

•Երկարամեայ նախկին աշակերտ (1994-2000) Տիար Արսէն Գարակէօզեան պսակուած է Օրդ. Յիլտա Տարեանի հետ, Ուղթըթաւունի (ԱՄՆ) Սբ. Ստեփանոս Եկեղեցիին մէջ, 30 Յոկտեմբերի 2011-ին:

•2002-ի շրջանաւարտուհի եւ դպրոցի Շրջ. Միութեան նախկին վարչական Օրդ. Ծեսիքա Պասիլ պսակուած է Տիար Փոլ Էթիէնի հետ, Սէյխուէ Էլ Աթայա Մարուհի Եկեղեցիին մէջ, 1 Յոկտեմբերի, 2011-ին: Նորապսակ զոյգը Սոկրեալ կը բնակին:

•1978-ի շրջանաւարտ Տիար Արնոլտ Պապիկեան պսակուած է Օրդ. Լիզա Գասապեանի հետ, 20 Նոյեմբերի, 2011-ին, Թորոնթոյի Սբ. Գրիգոր Յայ Կաթողիկէ Եկեղեցիին մէջ:

•Երկարամեայ նախկին աշակերտ (1986-1990) Թորոս Սալպաշեան պսակուած է Օրդ. Միրն Պեքարեանի հետ, 24 Սեպտեմբերի, 2011-ին, Սբ. Եղիա-Ս. Գրիգոր Լուսաւորիչ Յայ Կաթողիկէ Եկեղեցիին մէջ, Պէյրուս:

•Նախկին աշակերտուհի (1999-2002) Օրդ. Զրիստին Ադամեան պսակուած է Տիար Վիգէն Ս. Վահրատեանի հետ, 3 Սեպտեմբերի, 2011-ին, Սբ. Նշան Մայր Եկեղեցիին մէջ, Պէյրուս:

ՄՊԱՔԻՆՈՒՄ

•1971-ի շրջանաւարտ, Նիւ Եորք բաքնակ Տիկ. Սիլվա Թիւթիւնճեան-Եօրտեքեան, Բարիզ, քոջը այցելութեան շրջանին ոտքը դառնալով արկածահար կ'ըլլայ եւ երկար շրջան մը Նիւ Եորքի մէջ եւ ապա Նոյեմբերեւ սկսեալ Պէյրուսի մէջ ապաքինման բարուքը ընթացք մը կը բուրդէ:

ՄԱՀ

•1965-ի շրջանաւարտ Տիար Վահէ Ինճեճիքեան (1947-2011) մահացած է Լոս Անճելոսի մէջ, 12 Յուլիսի, 2011-ին:

•1955-ի շրջանաւարտ, գրող Տիար Կարո Բարսեղեան (1935-2011), հեղինակ «Ատ Յանգի» գրքին, մահացած է Թորոնթոյի (Գաւատա) մէջ, Յուլիսի կէսերուն:

Ն Ո Ւ Ի Բ Ր Ա Տ Ո Ւ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

«ԼՐԱՏՈՒ»-ի նախորդ թիւի հրատարակութենէն ասդին շնորհակալութեամբ ստացուած են հետեւեալ նուիրատուութիւնները ի նպաստ դպրոցին.

Րաֆֆի Մանուկեան Կրթանպաստի Ֆոնտէն (Լոնտոն) 14.200 տոլար, Յ.Բ.Ը.Մ.-ի «Չաւէն Ստըրլեան Մրցանակ»-ի գումարը 2500 տոլար, որ Պրն. Տնօրէնին փափաքով տրամադրուեցաւ կրթանպաստի ֆոնտին, ազնիւ բարերար Տիար Գեորգ Արապեանի եռամսեայ յատկացումը՝ 3000 տոլար, նախկին աշակերտ Տիար Սարգիս Սիմիթեանի տարեկան յատկացումը 1000 տոլար, շրջանաւարտ Տնօր. Արմէն Կեօնճեան (ԱՄՆ) Տնօրէնութեան գրասենեակ այցելութեան առթիւ 1000 տոլար, Թեքեան ընտանիք (ԱՄՆ) իրենց ծնողաց յիշատակին 500 տոլար, շրջանաւարտ Տիար Յամբիկ Գեորգեան (Լոնտոն) դպրոց այցելութեան առթիւ 200.000 լ.ն., Տիար Կարպիս Նազարեան (Պէյրուս), իր տարեկան նուէրը 250 տոլար, Տիկ. Վեհան Պետիրեան, ի յիշատակ Սարգիս Յասրըճեանի 100.000 լ.ն., նախկին հոգաբարձու Տիկ. Յասմիկ Յալեպլեան (ԱՄՆ) առ ի գնահատանք «Սիփան»-ի, 83 տոլար, ճորճ Լոշիանճեան (ԱՄՆ) առ ի գնահատանք «ԼՐԱՏՈՒ»-ին 98 տոլար, Տէր եւ Տիկ. Էտուըրտ եւ Սիրան Դաւիթեան 100.000 լ.ն., Տնօր. Մկրտիչ Պալապանեան (ԱՄՆ) Տնօրէնութեան գրասենեակ այցելութեան առթիւ 500 տոլար:

ԱՄՆ-ի Արեւմտեան Ափի Յ.Ա.Գ.-ի Շրջ. Միութեան միջոցով, Տէր եւ Տիկ. Րաֆֆի Գրաճեան 2500 տոլար, Տէր եւ Տիկ. Վիգէն Գրաճեան 2500 տոլար, Տնօր. եւ Տիկ. Նազարեթ Տարազճեան 1000 տոլար, Կտանեան քոյրեր 100 տոլար: Առ ի գնահատանք 2010-ի «Սիփան»-ին Տիկ. Մարի Աղոյեան 50 տոլար, Դոկտ. ճորճ Այնիլեան 100 տոլար, Տիկ. Յուրի Պասմաճեան-Բրուտեան 50 տոլար, Տիար Յարութ Տէր Դաւիթեան 100 տոլար, Տիար Սիրո Յիւսէյնճեան 100 տոլար, Տիար Կարո Գասարճեան 50 տոլար, Տիար Յակոբ Մարգարեան 100 տոլար, Տիկ. Սիլվա Սալիպեան 100 տոլար:

1964-ի անարտական կարգի վերահաւաքին առիթով՝ Տնօր. Վահիակ Դարբինեան 300 տոլար, Տիար Յակոբ Խաչատուրեան 300 տոլար, Տիար Արաքսիա Սաղոճեան 200 տոլար, Տիար Կարպիս Սաղոճեան 100 տոլար, Տիար ճորճ Կեպէշեան 200 տոլար, Տիկ. Արմիկ Թաշճեան-Միլտենեան 100 տոլար, Տիար Կարոզէ Թաքաճեան 100 տոլար, Օրդ. Սոնիա Մերտինեան 100 տոլար, Տիար Միսաք Պարսումեան 100 տոլար, Տիկ. Յերա Չանոյեան-Տիպ 200 տոլար, Տիար Րաֆֆի Աբօշեան 200 տոլար, Տիկ. Լենա Տէր Սահակեան-Գալայճեան 200 տոլար, Տիկ. Շաքէ Ինճեճիքեան-Եկաւեան 200 տոլար, Տիկ. Նինա Շահինեան-Միհրանեան 300 տոլար, Տնօր. Արմէն Կեօնճեան 400 տոլար, Տիար Յովհաննէս Միլոյեան 200 տոլար, Տիկ. Չուարթ Յակոբեան-Եագուպեան 300 տոլար, Տիկ. Յասմիկ Եղիայեան-Մահսերճեան 50 տոլար, Օրդ. Մարի Լուիզ Մենշեան 300 տոլար եւ Տնօր. Արա Մանուկեան 250 տոլար: Ընդամենը՝ 4000 տոլար:

Պրն. Տնօրէնին ի պատիւ տրուած 24 Օգոստոսի ճաշկերոյթին, Տիկ. Անուշ Զեօփճեան 50 տոլար, Տիկ. Յելլա Սարգիս 100 տոլար, Տնօր. Տիար Յարութեան 100 տոլար, Տիար Ասպետ Գրանեան 100 տոլար, Տիար Յակոբ Մարգարեան 100 տոլար, Տիար Յարայր Պալեան 100 տոլար, Տիար Օհան Սափարճեան 100 տոլար, Տիկ. Սալիկ Աւագեան 100 տոլար, Տիար ճորճ Զեօշկերեան 200 տոլար, Տիար Սեդրակ Պալեան 200 տոլար, Տնօր. Վիգէն Ահարոնեան 250 տոլար, Տիար Կարո Գասարճեան 250 տոլար, Տիար Գրիգոր Շենեան 250 տոլար, Տիար Կարո Գազանճեան 250 տոլար, Տիկ. Սոնիա Տումանեան 500 տոլար, Տէր եւ Տիկ. Վիգէն եւ Ծովինար Տէր Դազարեան 500 տոլար եւ Տիար Ասատուր Սարաֆեան 1000 տոլար: Ընդամենը՝ 4150 տոլար:

Պրն. Տնօրէնին ԱՄՆ այցելութեան առիթով վերի նուիրատուութիւններէն անջատաբար նուիրատուութիւններ ըրին Տիկ. Մարիա Ակիլեան 200 տոլար, Տիկ. Լարա Շահինեան-Տիլիպեան 200 եւ Տիկ. Լիւսի Գարակէօզեան 250 տոլար:

հմբագիր՝ Տնօրէն Չաւէն Ս. Ստըրլեան
Նորհրդատուներ՝ Տեարք Ներսէս Պաղտոյեան եւ Յակոբ Տեմիրճեան
Էջադրում՝ քարտուղարուհի Ճողեր Աղպաշեան-Ֆայսալ
Y.M. Philibossian Armenian Evangelical College P.O.Box 3672- Beirut, Tel: 01-349816 - Fax 01-751469
E-mail: A_E_C@cyberia.net.lb